

զըլ փաշան եկաւ, որն որ Պրուսայի կուսակալէն Լէֆթէր և Սանիւ աւագակապետները բռնելու համար հըլ լազանգներ առած ըլլալուն, աղբու միջոցներ՝ ձեռք առաւ, և Մէլիսի Քէպիլի անդամները գիւղերը զոկեց մարդիկ զինուորելու համար: այս մարգոց թիւը քանի մը հազարի պիտի հասնի, կրտսի, և որոնց պաշտօնը պիտի ըլլայ լեռանց անցքերուն վրայ հօկել և աւագակներուն հաղորդակցութիւններն արգելել: Ար կարծուի որ եթէ այս կերպով ամեն կողմէ պաշարուին, այս անգամ մերժապէս կրնան ձերբակալ ըլլալ: Սիւ և նոյն պատրաստութեան մէջ է նաև Պրուսայի կուսակալը: »

— Եւս գիշեր ժամը ցին միջոցներ մայրաքաղաքին Քիպիլի գրան դուրը հրդէս պատահելով 20ի չափ խանութ և 6—7 տուն այրեցան: »

— Ուստի Պրուսայի մէջ իրենց յաղթական ընթացքը կը շարունակեն և այն կողմերու մոլեռանդ ու բարբառոս ժողովուրդները մի առ մի կը նուաճեն: Յուլիս 2ին նոր և փառաւոր յաղթութիւն մ'ալ ըրեր են, և Մէլիս զորապետը 45000 զօրք Սամարիանով վրայ յարձակելով առերէ ելեր: այսու ամենայնիւ անցեալ տարի ալ այսպիսի լուր մը լսուելուն և յետոյ անհիմն ելներուն համար այս անգամ ալ ստուգուելուն սպասելու է:

— (Թրիեսի Սպիտի լեռան խորքին նայելով, Պարտաղի մէջ քօլեռան սաստիկապէս ծարակեր է և արդէն ըրու նուազեցողութիւնը հինգ վեց հազարի հասեր է: Արտուի թէ Էրաքի գաւառին մէջ ալ ծարակիլ սկսեր է:

— Ճալա կողմէն մէջ ահագին երկրաշարժ մ'ենելով՝ շատ շէնքեր կործանեցան և շատ մարդիկ ալ փրատակաց ներքեւ մեռան:

... խմբագիր:

Հայկեան բարեկաւութեան Օթանդակ ընկերութիւնն պարտք կը համարի իրեն իւր շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել ամեն ազգասէր անձանց՝ որոնք իրենց նըւէրներով ընկերութիւնն քաջալերելով աւոր յառաջողութեան ձեռնադրու կրկան, ուստի կը խնդրէ որ բարեհաճիք անկիւն մը շնորհիլ գրութեանս Զեր պատուական լըրագրոյն մէջ:

« Ընկերութեան նպատակին համեմատ գրեթէ ամեն հայ լրագիրներ կը գտնուին ընթերցարանս, որոնցմէ մէկ քանին հետեւեալ ազգաներ անձանց կողմէն նուիրուած ըլլալով մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնեմք իրենց:

Մեծ... նուիրեց Կարապետէֆ, Խիւսիսեան Մուսա... Կարապետէֆ, Փանոսեան Փաշա... Զենոբէֆ, Հիւսարեան Կեօկէ... Տօթթոր Մ. Բ. Խիւսիսեան Ծուլի... Յրանկիւլէֆ, Միւսիլեքեան:

Ընկերութիւնն կը յուսայ որ ազգասիրաց շնորհիլ թէ անդամակցութեամբ եւ թէ նուերներով աւելի եւս քաջալերուելով պիտի կարողանայ բաղմամբ լըրագիրներով եւ գիրքերով դարգարուած ընթերցարան մը ներկայացնել ընդհանրութեան առաջը: Իւր նպատակը Ազգին ձրիաբար և բարոյապէս ծառայութիւններ մատուցանել ըլլալով եւ իւր գիւրգիլութեանը ամենուն վիճակին յարմար ըլլալով, կը յուսանք որ պիտի փութան ազգայինք իրենց անդամակցութեամբ քաջալերել ընկերութիւնն:

Ընթերցարանս առ այժմ երեք գիշեր շաբաթը գաղղիներէն դատախազութիւն կը ըլլայ եւ 10ի չափ աշակերտներ դատաւորութեան կը յաճախեն հոն:

Ընկերութիւնն նպատակը պարզ և մարդասիրական ծառայութիւն մ'ըլլալով, պատշաճ կը համարուիք ընդհանրութեան ու շարքութեան ներկայացնել զայն, իմացը ներով միանգամայն որ ընկերութեան կատարողութեան տեղեկանալ ուղղութիւնը կը հրաւիրուին փորձութեան ընթերցարանը ի Մուսալիս թիւ 12:

Ընկերութեան նպատակը ոչ առեւտրական է ոչ քաղաքական եւ ոչ կրօնական, այլ Հայ ազգին բարեկաւութեանը բարոյապէս եւ ձրիաբար ծառայութիւններ մատու-

ցանել ան հետեւեալ միջոցներով: Ա. Ընկերութիւնը ամեն օրինաւոր կերպերով պիտի պատուէ և պաշտպանէ Ազգին իրականապէս ծառայող լրագիրները: Բ. Առ այժմ մայրաքաղաքին մէջ միայն զանազան թաղեր բարեկարգ ընթերցարաններ հաստատուելուն պիտի օգնէ: Գ. Հրապարակական դատախազութիւններ ընկեր և բարոյական ու խրատական ճառեր խօսիլը ամեն առաջ օրինաւոր նըւապատներով պիտի քաջալերէ: Իսկ կրօնական վիճաբանութեանց ամենեւին միջամբարութիւն չպիտի ընէ: Ի զիմաց յանձնաժողովը Հայկեան բարեկաւութեան Օթանդակ ընկ. 1867 յուլիս 13 Աստուղակի Ընթերցարան 2. Բ. Կարապետ Մ. Պանոսեան Օթանդակ ընկեր: Մուսալիս

Հետեւեալ գրութեան հրատարակութիւնը կը խնդրուի մեզէ: ... խմբագիր:

« Եւս Խորալէ վարդապետը որ որ 1860 յուլիս ամսոյ մէջ Մարտի Գ. Յովհաննէս երեկոյեայ մէջ քարոզութեան պաշտօն կը վարէր, իմ տղայական անխոհեմ ընթացքով խեղճ ինչուան ցարդ անանկ վիճակի մը մէջ կը գտնուէր որ բոլոր ազգայնից ծանօթ է: Ար վրայէ երկինք՝ որ անտոնեւան իմ ըրածներս չէի կրնար գիտնալ որ յիշեալ վարդապետին համար աստիկ խաւար ապագայ մը պիտի պատրաստէին: ասոնք ամենն ալ մութ էին ինձի համար, քանի որ հաստիկ և մութով տակաւին տղայ էի, բայց հիմա որ կատարելութեան հասած եմ, իրեւ մարդասպան մը խղճիս թեկերը ամեն օր և աւմին վայելեան սիրտս կը խայլեն: ուստի թէ իմ իրկնա հանդարտեցնելու և թէ մարդկային պարտք մը կատարելու համար՝ սփայուած եմ հրապարակալ իմ անտոնեւան տղայական անխոհեմութիւնս յայտնելով՝ յիշեալ վարդապետին պատիւը տեղը բերել: »

« Ես ինձի վերաբերեալ պատիժներս արդէն խղճիս խայլեթեան առած եմ, ուստի հիմա իրեւ քրիստոնեայ մը իմ զղճումս յայտնելով, կը փախալիմ: ... խմբագիր, որ իմ անունս ծածկել լարեհ հաճիք: »

Յուսամ որ վարդութիւնը կը բաւական զանկալ որ աս պատճառաւ ինչուան ցարդ դատաւարութեան ենթարկած է, եթէ չունի ուրիշ պատճառ մը, նորէն պաշտօններու գործածելով միտմարել, որ իմ սրտին հետ աւոր վրայ գայթակղած խուճ մը ժողովրդեան սրտին ալ հանդարտեն: »

Տար երկինք որ իմ այս ձայնս լընել ըլլար: * * *

1867 յուլիս 2 * * * Մարտի-Պատիւ

Տրապիզոնէն հետեւեալ կը գրեն մեզ: ... խմբագիր:

Փետր թիւ 177 և 178 թիւերուն մէջ Մեզպուրեան Պ. Ներսէսի նկատմամբ երկար վէպ մը կարգացինք այս օրերս: ինչեալ առաջակցաւ գրուածոց ծայրէ ի ծայր դրապարտութենէ զատ նշանակութիւն մը չունենալը պարտք կը համարինք ի սէր ճշմարտութեան եւ արդարութեան ի լուր ազգիս հրատարակել պատուական Մատիւնի միջոցաւ, քաջալայ ըլլալով որ ձեր արդարախոհութիւնն ալ չզլանար օրին հրատարակութիւնս Մատիւնի հաղորդել ընդհանրութեան: »

Պ. Ներսէս Մեզպուրեան երկուքուկէս տարուան միջոցին երկու տարի թէ մեր հետ կ'ենայ անցողիկ ընդհանրապէս և կ'իրական օրերը, երբեք անբարոյականութեան նշան մ'անգամ չի տեսներ վրան, ինչպէս որ քանդակուած են քանի մը չարակամ և նախանձարեկ լեզուք: այլ ընդհակառակն բարեբարոյ եւ քաղցր, օրով ազգայնից ամենուն սէրն ու համակրութիւնը գրաւելէն զատ, օտարազգիք անդամ մեծ պատիւ եւ սէր կը ցուցնէին իրեն, որուն ապացոյց մինչեւ հիմա ալ

պոքութեամբ կը խօսին վրան: ասիկա ոչ թէ իրեւ բարեկամ Պ. Մեզպուրեանի, այլ արդարութեան սիրով անաչառ կը գրենք: Ինչո՞ւք մէջ հանդիսակցանելու հետ ուրախութիւն ընելը մեծ յանգանք մ'է, մինչդեռ հետեւեալ առաւել ամենէն կանուխ իր պաշտօնին կը վազէր: Իր պաշտօնութեան մէջ սիրելի բոլոր ծանր հիւանդութեանէ մ'աղաւտելուն աւետար թերող աշակերտի մը ճակատն համարելով զիրք մը ընծայ տալը մեզք է: միւս զրապարտութիւնն ալ այս կարգէն ցնցողիկ կարկուտներ ըլլալով ուշիմ ընթերցողը կ'ըզնայ համարելու են, մէկ խօսքով, եթէ այն դարձնութեանց պատասխանելու ելլեմք, ասորազրոյ պարտններն աշխարհէս երկու փախչելու եւ ողջողջ գերեզման մտնելու են: արդէն օտարազրոյներէն երկուք յետո կոչած են, միւս ցածններուն շատերն ալ թիւերս խղճի խայլին կը տագնապին և այսօր չէ վազն անշուշտ պիտի ստըմանն ճերմակին սեւ լուսոյն խաւար բերնուն: Արդէն քաղաքիս համարութիւնը մեծ զայրոյթ եւ արդար ցատում ունի այս բանին վրայ, բայց խոհականութիւնը չթողարձ յուզմունք չյարուցանելու համար: »

Յիշեալ գրութեան ընթերցողը եթէ դատողութեան տէր մէկն է, անշուշտ պիտի ճանչէ ինչ առեկի կրեւք գրուած ըլլան եւ զայն ստորագրողներուն արժանիքը, գիտնալով որ Տրապիզոնցի այնչափ ապուշ չէ որ աշակերտ անբարոյական մէկն երկու տարեկէս ասանկ փախուկ պաշտօնի մը վրայ պահէ 600էն աւելի աղկին երկուս դաւազուածն անոր ուսման եւ դատարարութեան յանձնելով: աստիկ տարի մ'առաջ մինչդեռ Պօլիս մեկնեցաւ, ինչու վերստին բերել տուաւ: Մէկ խօսքով, ասոնք այն տեսակ մարդիկ են որ աղկին պատիւն իրենց առջեւ նշանակութիւն մը չունին, որուն քանիք քանի օրինակները ցուցուցած են անցեղին մէջ և կ'ապագայեցան: քայքայ երեւոր ամաչէ, Յու է մեզ և ճշմարտ ազգասիրաց ասանկ վատեղու դատաւար մէջ անպակաս ըլլալն ի վնաս աղկին: Միւսմը ձերու մեծապատուութեան միշտ յարգանքը Արտուր Երեմիան:

ՊԵՐԵՋՈՎՍԻԻ ԴԱՏԸ

Ուստի կայսեր դէմ սպանութեան փորձ ընող Պերեզովսիի դատը յուլիս 15ին տեսնուեցաւ: Մէկ երեւոյս, դատ ատենին առջեւ ի Փարիզ:

Ետեանը հանդիսատեսներով լի էր, և դատաւորանի վրայ գրուած էին ոճրադործութեան տալմանակը, ամբաստանելոյն քանի մը վրիթերը, հալուստներն ու կարասիները:

Այս օրէն 1 1/2 ժամ առաջ ամբաստանեալն յատեն կոչուեցաւ: Իր դէմքը տոգոյն և մութած էր, մարմնը մութ խորտակալ, կարծ մորուք մ'ունէր, և ձախ ձեռքը ասորմանակին պայթմամբ կրած վէրքէն գեռ աղեկցած չըլլալուն՝ մեռաւորայ սեւ լաթի մը մէջ փաթկուած էր: Դէտն մտած ատեն իր փաստարանին՝ Պ. Խանանուէր Երեմիի երեւին ժպտելով քանի մը վայրեան հետք կը խօսի և իր ծանօթները խորեւելով կերթայ տեղը կը նստի:

Բիւ մ'եւքը նախադաշն ատենը կը բանայ, և ընդհանուր Օրինապահ Պ. Տը Մարիսս ամբաստանութիւնը կը կարդայ, որոյ պարագայներն արդէն յայտնի են:

Նախադաշն հարցաքննութեան կը սկսի և կը հարցնեն թէ իր հայրն ո՞րք է անկուրն և ո՞ր կը գտնուի: Ետեւ րաստանեալը կը պատահանէ թէ չգիտեր: Աւելի քան մը հարցումներէ ետեւ, որք ամբաստանելոյն անձնական զեպքանց կը վերաբերին, նախադաշն կը շարունակէ:

— Հ. Չարը (Ուստի կայսրը) հասած ատեն երկուքուկէս ժամը կ'ենացէ չիք, ուր ի հասնիլ տեսար: Պ. Ե. յո, տեսայ: Տ. Ինչու կեցիք էիք: Պ. Ուղեւ զի տեսնեմ թէ ինչպէս կրնամ գոյն ապանել, և որպէս զի չթողում որ իր սօքը՝ զաղղիական

հողին վրայ գնելով զայն սրտապղծէ (շարժում):

Հ. Ե. յո, ատեն միտքը զրկը որ Չարն ապանեա:

Պ. Ե. յո, այն վայրկեան և անկէ ալ առաջ: Ես իմ հայրենիքս դանդաւած ատենն ալ միտքս դրեմ էի վրէժ առնուլ: Բայց հոն գտնուած ատենն չէի կրնար սպաննել: և երբ տեսայ որ կարելի էր Պարոյեյ մէջ, չվարանեցայ:

Հ. Ե. յո, ուղեցիք որ Պարոյեյ ձեզի առած հիւրընկալութենէն օգուտ քաղելով Չարին կեանքը դաւաճանէք: Նարոյեյն կայսեր կողմանէ ձեր վեհապետին տրուած հիւրընկալութիւնն ալ չարագեղիք: Չեր ատրճանակն օրոք գէմ ուղղեցիք:

Պ. Իմ վրէժնդրութիւնս մի միայն Չարին դէմ էր:

Հ. Ե. յո, արարեալ վերադարձեց:

Պ. Ե. յո, արարեալ և անոր համար ինքզինքս կորուսի:

Հ. Չար բռնեցին, դուք կուգէիք՝ բայց թող չտեսնին:

Պ. Ե. յո, կուգէի և կեցցէ Լեւ հաստան ու դուք:

Հ. Չար ատրճանակէն միայն դընտակ մ'երաւ: ատրճանակը ծուռ պարպած էիք:

Պ. Չարեմ, ես Չարին գիտուն ուղղեցի և գիտէի որ եթէ զարնէի՝ պիտի մեռնէր:

Հ. Ար կարծէք ուրեմն թէ իրաւունք ունիք վեհապետ մ'ապանելու:

Պերեզովսիի, յուլիս 15ին Պարիսի նախագահ, քանի նա իմ հայրենիքս սպաննեց, նա իր գրեկն մեկ շարժմամբ բոլոր Լեւ հաստանի երիտասարդութիւնը Սիպրիա դրեց, նա ամբողջ ազգ մը յարստի և ի մահ դատարարեց:

Հ. Չէք գիտեր որ բնաւ մէկն իւրաւունք չունի իր նմանին կենացը զրկուելու:

Պերեզովսիի, ազգու կերպիւ, Ես իմ նմանն չէ:

Նախագահը. Ոչ, անշուշտ, անկա ձեզնէ վեր է, ձեր վեհապետն է:

Պերեզովսիի, Ե. մարդուն տալք անուն չեմ կրնար գտնել:

Հ. Չէք գիտեր որ Եստուած ըստ պանութիւնը կարգելու:

Պ. Ես Եստուած չեմ:

Հ. Բայց դուք ըսած էք թէ « կըրցայ վրէժս առնուլ: Եստուած ալ վրէժս կ'առնուէր կըրցայ դէմքը կը զըրկէ: Աւտի կարծեցիք թէ դուք կըրցայք ընել: Ինչ որ Եստուած միայն կարող է ընել իր արդարութեամբ և անմեղադրութեամբ:

Պ. Ես կըսէի թէ հանդերձեալ աշխարհին մէջ Եստուած ըստ իւր արդարութեան թող դատէ զայն:

Աւելի հարցումներէ ետեւ ալ՝ ամբաստանելոյն ընդգէմ և ի նպատակ վըկայեցը կը լսուին:

Ես վերջիններէն Լեւ հաստանի սպասարարութեան ժամանակ Լ. Ե. օշնի նիւյ մէջ նիզակաւորաց գնդապետ Պ. Պարեզի կը վրայէ թէ Պերեզովսիի իր խաւքին ամենէն ընտիր հնազանդ և բարեկարգ զինուորներէն էր, թէ երբ որ ապստամբութիւնը յաղթեցաւ, դաւաճապէս կարտատուէր որպէս թէ մայրը կորուսած ըլլար: Մեք, կըսէ գնդապետը, յորդորեցինք զայն որ արհեստի մը հետեւի, ուստի Պերեզովսիի Լեւ թաղաքն երթալով դործարան մը մտաւ: Բայց ինք երկու ազգ կը ծանչէր, Լեւ հաստան և Պարոյեյ, ուստի Պարոյեյ եկաւ, իր 5 Ֆրանք թոշակէն աւելցուցած 185 Ֆրանքով գիշերօթիկ վարժարան մը մտաւ: ստալը հաստնելուն պէս վարժարանէն ալ ելեր է, և մտած արուեստանոցներուն մէջ աւելի կը սիրէր կարգալ: քան թէ բանիլ, ուստի կը ծամբուէր:

Նախագահն ամբաստանելոյն բնաւ կարան եկած խուզարկութեանց տե-

Իմ քաղաքի Տնօրեն
Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՄ ԼՐԱԳՐՈՑ
Կ. ՊՕԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ